ԲԱԺԻՆ 3. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
РАЗДЕЛ 3:МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ
SECTION 3: TEACHING METHODICS

371.3

ԽԻԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արզումանյան Արմենուհի
ԵՊՀ, Հայաստան

Համառոտ ներածական: «ԽԻԿ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները» վերտառությամբ հոդվածում փորձել ենք ցույց տալ մեթոդի կիրառման ինքնատիպ շերտերը՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով, նրա խորքային վերլուծության անհրաժեշտությամբ, նախորդ նյութի և ուսուցանվող թեմայի փոխկապակցված մեկնաբանությամբ: Մեթոդի կիրառման յուրահատկությունները տեսանելի ենք դարձրել Ա. Բակունցի «Լառ-Մարգար» պատմվածքի վերլուծության հիման վրա:

Բանալի բառեր և բառակապակցություններ: Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում, գաղափարական խնդիրներ, գեղարվեստական արժեք, պատկերակերտման միջոցներ:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել ԽԻԿ ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային մեկնաբանության հնարավորություն, անցած նյութի համակարգում և ամփոփում, նախորդ թեմայի օգնությամբ նոր նյութի բացատրութուն, ուսուցանվող թեմայի փուլային վերլուծություն և ստացված գիտելիքների ամրապնդում:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված մի շարք գիտական հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008), Սարուխանյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ (Երևան, 2009), Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ», («Էր. Ֆ. Էբերտ հիմնադրամ», Հայաստան, 2020), Valmont W., Technology for literacy teaching and learning. New York. Houghton Mifflin Company, (2006):

Վերոնշյալ հեղինակները փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ մեթոդով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

Հետազոտության նորույթն է ԽԻԿ ուսուցման ժամանակակից մեթոդի փուլային կիրառման դիտարկումը: Քննարկվել է գեղարվեստական նյութի և պատմական ժամանակաշրջանի փոխկապակցվածությունը՝ որպես ուսուցանվող նյութի խորքային վերլուծության միջոց:

Ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում հետաքրքիր և արդյունավետ է ԽԻԿ մեթոդը (ԽԻԿ- խթանում, իմաստի ընկալում, կշռադատում): Ուսուցման գործընթացի այս երեք փուլերի հերթագայությունը նպաստում է ուսուցանվող նյութի ճիշտ և բազմակողմանի վերլուծությանը, դասավանդվող նյութի՝ աշակերտների կողմից խորքային ընկալմանը:

1-ին՝ խթանման փուլ

Այս փուլը ուսուցանվող նյութի հետ կապված բուն խնդրի, գրական երկի գաղափարական հարցադրումների, գեղարվեստական արժեքի գնահատմանը նախորդող փուլն է: Ուսուցիչը պետք է նյութի մատուցման ժամանակ մինչ բուն խնդրին անդրադառնալը, իր նախնական խոսքում քննարկի այնպիսի հարցադրումներ, իրողություններ, որոնք կնպաստեն, կխթանեն ուսուցանվող խնդրի ավելի հեշտ, ճիշտ, բազմակողմանի ընկալմանը: Ուսուցանվող թեմայով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է նախորդ նյութի վերհիշեցման, գրական կյանքի՝ տվյալ ժամանակաշրջանի իրողություններով պայմանավորված խորքային վերլուծություն կատարի, որպեսզի աշակերտները հասկանան տվյալ գրական երկի գեղարվեստական արժեքը, այն գաղափարական մտայնությունը, աշխարհայացքը, որը կրում էր գրողը երկը գրելիս: Ուսուցիչը պետք է բացատրի, որ գրական երկի գնահատումը պետք է կատարել՝ հաշվի առնելով տվյալ ժամանակաշրջանի գաղափարական, քաղաքական, հասարակական մտայնությունը, հասարակական-քաղաքական տեղաշարժերը, որոնց առանձնահատկություններով պայմանավորված՝ փոխվում է հասարակության արժեհամակարգը, աշխարհայացքը, մտածողությունը, ինչը, բնականաբար, իր հետքն է թողնում գրողի գրական հայացքների, կերպարակերտման, կենսափիլիսոփայության վրա: Օրինակ՝ Ակսել Բակունցի՝ կորած հայրենիքի թեմայով գրված պատմվածքների ուսուցումը ցանկալի կլինի իրականացնել այս մեթոդով, որը կնպաստի նյութի առավել խորքային և բովանդակալից մատուցմանը:

Բակունցի «Լառ-Մարգար» պատմվածքի ուսուցումը վերոնշյալ մեթոդով կարելի է կիրառել հետևյալ կերպ: Խթանման փուլում ուսուցիչը նախ պետք է բացատրի 20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական իրողությունները, հասարակության կյանքում կատարված կացութաձևային տեղաշարժերը, դրանցով պայմանավորված՝ ժամանակաշրջանի գաղափարախոսությունն ու մտայնությունը, որոնք կենսական հենքն են պատմվածքում արտահայտված գաղափարական հարցադրումների: Նախ ուսուցիչը պետք է բացատրի, որ 20-րդ դարասկիզբը հարուստ էր պատմական աշխարհացունց իրադարձություններով՝ Առաջին համաշխարհային պատերազմ, Մեծ եղեռն, Հայաստանի առաջին հանրապետության ստեղծում և փլուզում, խորհրդային կարգերի հաստատում: Նոր հասարակարգը բերեց նոր հայեցակարգ ու գաղափարախոսություն: Ուսուցիչը պետք է նշի, որ 20-րդ դարասկզբի բարդ ու հակասական մտայնության պայմաններում, երբ աղարտվում էին ազգային ու համամարդկային արժեքները՝ ստորադասվելով ստալինյան բռնատիրության «Զևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» կարգախոսին, վտանգված էին ազգային նկարագիրը, ազգային միտքն ու հոգեկերտվածքը: Այս ամենի լավ գիտակցումով ազգի քաղաքական բախտով մտահոգ հայրենանվեր հայ գրողները՝ Չարենցը, Բակունցը, Մահարին, ստեղծագործական խի-

զախումով հակադրվեցին «Անհատի պաշտամունքի» հարկադիր օրենքներին՝ մոտ կանգնելով ազգային արմատներին, ազգային նկարագրին ու էությանը:

Գրականության մեջ արգելված թեմաների շարքում էին դարասկզբի ողբերգության թեման, անդրադարձը պատմական մոտ անցյալին, արևմտահայության ճակատագրին: Սակայն պատմական ողբերգությանը մոտ կանգնած սերունդը իրավունք չուներ լռելու, որովհետև եթե թուրքական յաթաղանի ոճրագործությունները տեսած ու այդ ցավը ցմրուր զգացած սերունդը լռեր, ապա եկող սերունդները պահանջատեր չէին դառնա, նրանց համար կաղարտվեր պատմական անցյալի իրական ուղին, կվտանգվեր ժողովրդի պատմական հիշողությունը: Իսկ պատմական հիշողություն չունեցող ժողովուրդը չէր կարող իր ապագան կերտել՝ պահելով ազգային դիմագիծն ու ազգային նկարագիրը: Այս ամենը բացատրելուց հետո ուսուցիչը պետք է շեշտադրի, որ «պատմական հիշողությունը ընդամենը հիշողություն չէ ողբերգական հանգուցալուծման մասին: Դա նաև հոգևոր մերձեցում է ժամանակով ստուգված հոգևոր արժեքներին, ժողովրդի կենսափորձով հաստատված այնպիսի չափանիշների ու սկզբունքների որդեգրում, որոնք կենսահաստատ բովանդակություն ունեն» [3]: Այս գիտակցումով էլ նորագույն արձակում առաջինը Բակունցը անդրադարձավ արևմտահայության ճակատագրի թեմային՝ իր «Ծիրանի փող»-ով պատգամելով եկող սերունդներին միշտ տեր կանգնել պատմական հիշողությանն ու ազգային ցավին, այն լսելի դարձնել ողջ աշխարհին մինչև երանելի այն պահը, երբ իրականություն կդառնա հայի նվիրական երազանքը՝ պատմական հայրենիքի վերադարձը:

2-րդ՝ իմաստի ընկալման փուլ

Այս փուլը հաջորդում է խթանման փուլին: Նախորդ փուլում ուսուցչի կողմից կատարված նախնական բացատրական աշխատանքը, ուսուցանվող նյութի հետ կապված որոշակի իրողությունների քննարկումը հնարավորություն են տալիս բուն խնդրի բացահայտմանը, գրական երկի իմաստի ընկալմանը: Այս փուլում արդեն ուսուցիչը բացատրում է տվյալ գեղարվեստական ստեղծագործության գաղափարական հարցադրումները, կերպարակերտման արվեստը, լեզվամտածողության առանձնահատկությունները, գեղարվեստական արժեքը, գրողի կենսափիլիսոփայության ինքնատիպությունը: Իսկ վերոնշյալ խնդիրների ընկալմանը կնպաստի այն նախնական բացատրական աշխատանքը, որ ուսուցիչը կատարել էր նախորդ փուլում: Այս դեպքում կբացակայի նյութի՝ ուսուցչի կողմից մակերեսային վերլուծությունը, աշակերտների՝ թեմայի ընկալման բարդությունը:

Բակունցի «Լառ-Մարգար» պատմվածքի ուսուցման այս փուլում ուսուցիչը պետք է վերոնշյալ նախնական բացատրական աշխատանքից հետո շեշտադրի պատմվածքի գաղափարական հարցադրումները, բակունցյան պատկերակերտման արվեստի առանձնահատկությունները, բակունցյան գեղագիտության նրբերանգները, պատմվածքի գեղարվեստական արժեքը: Ուսուցիչը պետք է նշի, որ չնայած ստալինյան բռնատիրության կաղապարված գաղափարախոսությանը՝ Բակունցը ստեղծագործական խիզախումով առաջինը նորագույն արձակում բերեց արևմտահայի հավաքական-ընդհանրական կերպար՝ նրա մեջ խտացնելով արևմտահայ մարդու ներաշխարհային ծալքերը, հոգու ցավն ու անսահման տառապանքը, կորցրած եզերքի անափ կարոտը, ապրելու, արարելու աննկուն ոգին, նրա կենսափիլիսոփայության խորախորհուրդ շերտերը: Այդ շերտերը Բակունցի «Լառ-Մարգար» պատմվածքում տարակերպ մոտեցումներ ունեն՝ մարդ-բնություն, մարդ-աշխարհ, մարդ-ժամանակ: Շատ տարողունակ է առաջին շերտը՝ մարդ-բնություն: Ընդհանրապես բակունցյան գեղագիտության մեջ

պատկերակերտման ելակետային դրույթներից է մարդու և բնության համադրումը, որը դառնում է միջոց հերոսի հոգեվիճակի, բարդ ներաշխարհի բացահայտման: Այստեղ էլ նկատելի է բակունցյան այս մոտեցումը. բնապատկերի յուրաքանչյուր թրթիռ համահունչ է հերոսի հուզապրումին, բնանկարը դառնում է տարածական դաշտ, որի մեջ խտանում են գրական կերպարի հավաքական նկարագիրը:

Պատումը սկսվում է ջրի և մարդկային հոգու ներդաշն միաձուլմամբ: Ուսուցիչը պետք է նշի, որ ջրի ուժի փիլիսոփայությունը մեր գրականության մեջ Բակունցից առաջ էլ շեշտադրված է եղել՝ հիշեցնելով Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Դուրյանի «Լճակ», Մ. Նալբանդյանի «Վազող ջրին» բանաստեղծությունները, որտեղ ջուրը դառնում է մարդկային հոգու ունկնդիր, կյանքի ու անհատի, մարդու ու աշխարհի բախման լուռ վկա, և այդ բախումից ծնված ցավը՝ մորմոքող եզերք:

Բակունցյան հերոսն մեծ ցավ ունի, նրա հոգին բախվել է դաժան անարդարությանը, աշխարհի քարացած խղճին, և կյանքի փոթորկումներից հոգնած մարդկային հոգու և ջրի լուռ զրույցը դառնում է կեցության նոր ձև, որտեղ խաչվում են անցյալն ու ներկան, ներկան ու ապագան: Աշխարհընկալման նոր եզրույթ է դառնում մարդ-ջուր-հող եռամիասնությունը: Այս երեք ուժերը միաձույլ են գեղարվեստական պատկերի մեջ, նրանք կապված են կենսական լիցքերով և ապահովում են մեկմեկու գոյությունը: Բակունցյան պատումում անուղղակիորեն գրական կերպար է դառնում ջուրը: Ջուրը դառնում է անհատի և աշխարհի հարաբերության պատկերավորման համար միջավայր ձևավորող առաջնային գործոն: Մարդկային հոգու խայտանքը, նրա ցավի ու կարոտի, հույսի և սպասման հույզերը, դուրս գալով հոգուց ու սրտից, միանում են ջրին, որը նույն կերպ փարվում է հողին, նրա չորացած գուղձերին. «Արևից չորացած հողը, տեղ- տեղ ճաքճքած, ագահությամբ ծծում էր ջուրը, ճեղքերից օդի պղպջակներ էին դուրս գալիս, ձայն հանում, ասես հողը հազար պռոշ ուներ և անհագ ծարավ» [1]:

Ուսուցիչը պետք է շեշտադրի, որ բակունցյան հերոսի՝ ներաշխարհային բարձր արժեքներ խտացնող ուժը հողի և մարդու, աշխատանքի և արարողի՝ ժամանակի բազում փորձություններով վերահաստատված կապն է, որը դառնում է ազգային նկարագրի ընդհանրական երևույթ: Այստեղ բացվում է արևմտահայի ներաշխարհի, նրա կենսափիլիսոփայության մյուս շերտը՝ մարդ և աշխարհ հարաբերության կտրվածքով: Արևմտահայի կենսափիլիսոփայության այս շերտը բակունցյան պատկերում դարձյալ բացահայտման ինքնատիպ եզրույթ ունի՝ մարդ- ջուր -աշխարհ: Երբ գյուղացիները փորձում էին հերթից դուրս ջուր գողանալ, նրանց անարդար քայլը կանխվում էր Լառ-Մարգարի զարմանալի փիլիսոփայությամբ. «–Ծառդ պտուղ չի տար, յավրիս, գողության մի վարժեցրու» (էջ 128): Նա հավատում էր իր ասածին, իր աշխարհընկալմանը. մարդու անարդար գործը դրական հետևանքներ չի ունենա, անազնիվ արարքը բարի ավարտ չի ունենա: Զարմանալին այն է, որ այսպես մտածում էր մի մարդ, որը մարդ արարածի ամենադաժան ոճրագործությանն էր բախվել: Բայց միևնույն է, նա հավատում էր...: Երբ գյուղացիները չէին հավատում իր խոսքին, նրա զայրույթը սաստկանում էր. «Էս հասակս քաշեր, նոր պիտի սուտ խոսիմ…: Այս ասելիս Լառ-Մարգարը հանկարծ խեղճանում էր, ձայնը երերում էր: Թողնում էր խոսակցին, բահն առնում և առվի հետ գնում» (էջ 128): Այս խեղճության մեջ բախվում էին ցավալի անցյալը և հույսով լի ապագան, դառը ճշմարտությունն ու երանելի սուտը…: Բայց ջրի հոսքին զուգահեռ՝ մեղմվում էր հոգու փոթորկումը, հանդարտվում էր սիրտը, և նորից հավատում էր: Թվում է՝ մի պահ այս մեծ աշխարհի մեջ մոռացված, իր ցավի հետ մենակ մնացած Լառ-Մարգարը իր հոգու մաքրության հաղթանակով

մեծանում է, հզորանում՝ անսասան կանգնելով ապագայի առաջ իր կենսափիլիսոփայությամբ: Մադկային այս տեսակի առջև այնքան փոքրանում է այն աշխարհը, որը խաբեց նրան, անտարբեր մնաց նրա ողբերգությանը: Գնահատման հակադիր եզրերում հայտնված մարդկային որակները՝ տառապանքից էլ ավելի իմաստնացած մարդկային հոգին և աշխարհի քարացած խիղճը, արարումի խորհուրդը հնչեցնող մադկային միտքն ու մարդկային ցեղի արնածարավ մոլուցքը, ընկալման դաշտում տարածական խիստ տարբեր սահմաններ են գրավում: Փոքրանում է թուրքի այն տեսակը, որը ուժ չունի ինքնամաքրման, սեփական ժողովրդի պատմական անցյալի ճիշտ գնահատման, ոճրագործ նախնիների անմարդկային արարքների խարազանման, դրանով իսկ մարդկային հոգու և խղճի մաքրագործման:

Ուսուցիչը, բացատրելով բակունցյան կերպարակերտման արվեստի առանձնահատկությունները, պետք է շեշտադրի նաև բակունցյան գեղագիտության ինքնատիպ դրսևորումներից մեկը. պատումում հերոսի կենսափիլիսոփայության, հոգու ներքին շերտերի բացահայտման յուրօրինակ միջոց են դառնում խրոնոտոպի՝ ժամանակի և տարածության բակունցյան ինքնատիպ խաչաձևումները: Գեղարվեստական պատումի մեջ ժամանակը և տարածությունը բնականոն զարգացման ընթացք չեն ստանում: Այսինքն՝ ժամանակային երկու միավորները՝ ներկա, անցյալ, և տարածական երկու միջավայրները՝ Արևմտյան Հայաստան և Արևելյան Հայաստան, սյուժետային գործողությունների զարգացման ընթացքում ունենում են հետաքրքիր փոխզուգորդումներ, որոնք դարձյալ երևում են ջուր-մարդ-հող խաչաձևումներում: Բակունցը իր հերոսի կյանքի ճանապարհը չի զարգացնում անցյալ-ներկա և դրանով պայմանավորված՝ Արևմտյան Հայաստան, հետո՝ Արևելյան Հայաստան ժամանակատարածական հերթականությամբ: Ներկայի մեջ՝ Արևելյան Հայաստանում, հերոսի հիշողության ծալքերում, վերհուշի թևերին վերահյուսվում են անցյալի՝ ուրախությամբ և ցավով լեցուն վայրկյանները: Այդ վայրկյանների վերապրման լուռ վկան դառնում է ջուրը. ջուր-մարդ ներաշխարհային շերտերում երևում են մարդկային հոգու ցնցումները: Տեղահանությունից հետո օտար ափերում Լառ-Մարգարը «հեղեղի բերանն ընկած մրջյունի պես վեր ու վար էր անում, մագլցում մի ծղոտի վրա, բայց հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ»: Արաքսի մյուս ափին հայրենյաց հողը դառնում է այն կենարար եզերքը, որի համար Մարգարը, «բացի Թորոսիկից ու ծիրանի կորիզներից, ուրիշ ոչինչ չուներ ընծա տալու» (էջ 130): Եվ Լառ-Մարգարը թոռան հետ ինքնավստահ բարձրանում է նավի վրա: Տարածական երկու միավորների և ժամանակային երեք կտրվածքների համար անցումային հարթակ է դառնում ջուրը: Ջրի ալիքներում են խաչվում և տարանջատվում Լառ-Մարգարի համար երկու հարազատ եզերքները, իր անցած ու անցնելիք ճանապարհները: Ծովի ալիքները, որքան նրան մոտեցնում են նոր եզերքին, այնքան ցավալի անցյալը դառնում էր անզոր նրա կեցության նոր ձևի հաստատման ճանապարհին: Նա իր հին տան բանալիները «հանեց, տրորեց բռի մեջ, նետեց ծովը»: Բաժանումի այս վայրկյանը հուզապրումի բազմաշերտ ծալքեր ունի: Նախ բռի մեջ տրորումը դառնում է հնից բաժանման և այն նորից վերագտնելու հավատի խորհուրդ: Այդ տրորումի վայրկյանի մեջ Մարգարի լուռ զրույցն էր կորցրած հողի, կորցրած տան, կորցրած նվիրական արժեքների, նաև՝ վստահեցումը ապագայի ինչ-որ մի կետում վերագտնումի, վերամիավորման հետ: Քանի որ Բակունցի հերոսը Մ.Գալշոյանի հերոսի՝ Զորի Միրոյի նման ուներ իր անսասան կենսափիլիսոփայությունը. հողը մեկ տեր ունի, հողը ճանաչում է իր տիրոջը, հողը սպասում է իր տիրոջը…: Այդ սպասումը կարող է դարեր տևել, բայց նա իր տիրոջ նման հավատում է և սպասում է նրան…: Այս

է պատճառը, որ Լառ-Մարգարի բանալիները հայտնվում են ոչ ուրիշ տեղում, այլ ջրի մաքրամաքուր ալիքներում, ծովի խորախորհուրդ անդունդում, որը գաղտնիք պահել գիտի, իրեն վստահված նվիրական արժեքը թաքցնել գիտի և տիրոջը սպասել գիտի: Նույն ջուրը, իր ալիքներում պահելով Մարգարի հոգու նվիրական երազանքը, նրան տանում է հույսի նոր ափ՝ նորից անցյալի այդքան թանկ արժեքը վերագտնելու խոստումով: Այս է պատճառը, որ այստեղ՝ նոր հայրենիքում, Մարգարին այնքան հարազատ էր ջուրը, որը նրա ցավերի ու սպասումների լուռ վկան էր, նրա հույզերի ունկնդիրը: «Լառ-Մարգարը հանկարծ վեր էր թռնում տեղից, բահն առնում և դեպի ջրի բանդը գնում: Եվ ոչ ոք չգիտեր, որ Լառ-Մարգարը առվի բանդը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր, գյուղից հազարավոր վերստեր հարավ» (էջ 132): Ջրի հոսքին միաձույլ՝ հեռուներն են ձգվում Լառ-Մարգարի հիշողության ծալքերում ապրող կորցրած եզերքի հիշողությունները, դժոխային ճանապարհին կրած դժվարությունները: Այստեղ էլ Բակունցը ջուր-մարդ զուգահեռումներով բերում է Մարգարի՝ ցավերով ու դառնություններով լի ճանապարհի նկարագիրը. «Պղտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի էր զարկվել, վերջը ալիքը լափու էր տվել և Մարգարին իր թոռան հետ գցել այդ գյուղը» (էջ 128): Պղտոր հեղեղ բառ-պատկերում ջրի փիլիսոփայության, նրա մաքրության խորհրդավոր ուժի ընկալումը հակադրվում է նախնական իմաստին: Պղտոր հեղեղ բառ-պատկերի ենթաշերտերում արնախում թուրքի հայատյաց էությունն է խտացված, որը ամենակուլ հեղեղի նման փորձեց արմատախիլ անել հային, վերացնել նրա տեսակը, սակայն զարմանալի ոգեղեն մի ուժով հայը ապրեց, արարումի իր կենսափիլիսոփայությամբ հաղթեց. կորցրած եզերքից բերված ծիրանի կորիզները այստեղ՝ Արևելյան Հայաստանում, ծիլեր տվեցին, վերընձյուղվեցին՝ ձգվելով դեպի հեռուներում մնացած Մարութա սարի լանջերը, հաստատելով հայոց հավերժության խորհուրդը:

3-րդ՝ կշռադատման փուլ

Այս փուլում ուսուցիչն ավարտում է գեղարվեստական երկի գաղափարական հարցադրումների շեշտադրումները, բուն խնդրի բացատրական աշխատանքի վերջում ամփոփում ուսուցանվող նյութի ելակետային հարցադրումները, իր վերլուծական խոսքում տարանջատում այն ուղղորդող մոտեցումները, որոնք կնպաստեն աշակերտի՝ նյութի առավել խորքային և բովանդակային իմացությանը: Կշռադատման փուլում կատարվում է ուսուցանվող նյութի վերլուծական խոսքի համակարգում, առանցքային հարցադրումների ամփոփում: Բացատրվող խնդիրների ընդհանրացումից հետո ուսուցիչը կարող է օգտագործել նաև վեբ-որոնում մեթոդը: Աշակերտներին պետք է հանձնարարի, օգտվելով տարբեր աղբյուրներից, էլ ավելի խորքային վերլուծություն կատարեն՝ հիմնվելով ոչ միայն հայտնի գրականագետների գնահատումների, այլև ինքնուրույն եզրահանգումների, մոտեցումների վրա: Արդյունքում կստացվի գրական երկի արժևորման նոր հայեցակարգ՝ պայմանավորված աշակերտի նորօրյա արժեհամակարգային գնահատումներով ու մոտեցումներով: Բակունցի «Լառ-Մարգար» պատմվածքի ուսուցման կշռադատման փուլում ուսուցիչը պետք է նշի, որ 30-ական թթ. բարդ ու դժվարին տարիներին Ա. Բակունցը ստեղծագործական խիզախումով բացեց արևմտահայության ճակատագրի թեմայի այն արգասաբեր գրական ակունքը, որը պետք է հարստանար և նոր տարածքներ ներառներ իր տաղանդավոր հետնորդների գործերում, իր կենսական ու հոգևոր անհրաժեշտությամբ դառնար նորագույն գրականության մի բեղմնավոր երակը: 60-ականների գրական սերունդը նորովի հնչեցրեց բակունցյան «Ծիրանի փողը»՝ հաստատելով հայոց լինելիության խորհուր-

դը՝ պայմանավորված ազգի պատմական հիշողության վերաարժևորման անհրաժեշտությամբ:

Ուսուցիչն աշակերտներին պետք է բացատրի, որ յուրաքանչյուր ազգ ապրում, հարատևում է իր պատմությամբ, ուստի ժողովրդի պատմական հիշողության կանչը միշտ պետք է հնչի գրականության մեջ՝ դառնալով նրա կենարար ակունքներից մեկը: Պատմական հիշողության, պատմական ցավի ժառանգորդաբար անցման անհրաժեշտությունը դառնում է սերունդների միջև անքակտելի կապի, ազգային հոգեկերտվածքի ամրապնդման առհավատչյան՝ հաստատելով ազգի հարատևման խորհուրդ: Ճիշտ է նկատում բանաստեղծ Վ. Դավթյանը. «Առաջ ընթանալու և ճիշտ ուղղությամբ ընթանալու համար երբեմն պետք է ետ նայել, չկորցնել ժամանակների կապը, պատմության մոխիրը թողած՝ կրակը վերցնել՝ դրանով բարոյական նոր արժեքներ թրծելու համար» [3]: Ամփոփելով խոսքը՝ ուսուցիչը պետք է նշի, որ այսօր էլ անկախության ճանապարհ անցնող նոր սերունդը, գրեթե մեկդարյա հեռավորությունից ժառանգելով բակունցյան «Ծիրանի փողի» խորհուրդը, դարձել է հայրենյաց ցավի կրողը և ունկնդիր արյան կանչին՝ հնչեցնում է այն շարունակաբար սերունդներին փոխանցելու պատգամը:

Այսպիսով՝ ԽԻԿ ուսուցման ժամանակակից մեթոդը օգնում է բավականին հետաքրքիր և բովանդակալից դարձնելու դասը, նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը: Այս մեթոդը պետք է կիրառել հատկապես այն ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց մասին վերլուծական խոսքը դպրոցական դասագրքերում համեմատաբար քիչ է, և հիմնվելով միայն դասագրքային վերլուծության վրա՝ հնարավոր չի լինի բազմաշերտ նյութի ընկալում [5]: Այն ավելի հաճախ կարելի է կիրառել ավագ դպրոցի հումանիտար հոսքի աշակերտների մոտ, որովհետև նրանց մասնագիտական ուղղվածությունը պահանջում է գեղարվեստական երկի առավել խորքային և բազմաշերտ վերլուծություն և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու հմտություններ ու կարողություններ:

Օգտագործած գրականության ցանկ

1. Բակունց Ա., Երկեր, Երևան, 1986:
2. Դավթյան Վ., Կարևորը հոգու իմացությունն է// «Գրական թերթ», 1985, հ.3, 18 հունվարի:
3. Փանոսյան Ս., Ժամանակակից հայ արձակում հերոսի բարոյական երկու տիպի մասին// «Սովետական գրականություն» ամսագիր, 1988, հ. 6:
4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008:
5. Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, «Էր. Ֆ. Էբերտ հիմնադրամ», 2020:

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДА ПВР-ОБУЧЕНИЯ

Арзуманян Арменуи

ЕГУ, Армения

Аннотация

В данной статье мы попытались показать своеобразные слои применения метода, обусловленные характером обучаемого материала, необходимостью его глубинного анализа, взаимосвязанного с толкованием предыдущего материала и новой преподаваемой темы. Особенности применения этого метода стали более видимы и понятны на основе анализа рассказа Ак. Бакунца «Лар-Маргар».

Основной задачей исследования является выявление особенностей применения современного метода ПВР-обучения, его преимуществ как интересной формы обучения: возможность более глубокого толкования материала, систематизации и обобщения пройденного материала, объяснения нового материала с помощью предыдущей темы, поэтапный анализ изучаемой темы и закрепление полученных знаний.

В методической литературе есть ряд научных исследований, посвященных вышеуказанной проблеме: «Современные методы обучения, приемы, упражнения», Лорийское отделение КАИ, с Ванадзор, 2008 г., С. Саруханян и др., Современные методы, приемы, упражнения, Ереван 2009 г., «Эффективные приемы обучения», С. Хачатрян, Э. Ф. Эберт фонд, Армения, 2020 г., Валмонт В. «Технологии преподавания и обучения грамоте:», Нью-Йорк. Компания Houghton Mifflin, 20. Вышеупомянутые авторы пытались по-своему представить особенности, присущие современным методам обучения и особенности их применения.

Цель статьи – выявить сущность вышеуказанного метода, принципы обучения данным методом, указав и обосновав его преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода преподавания, а также особенности, вытекающие из цели обучения.

Новизной данного исследования является рассмотрение поэтапного применения современного метода ПВР–обучения. В статье была рассмотрена взаимосвязь художественного материала и исторического периода как средство глубинного анализа обучаемого материала.

Ключевые слова: стимулирование, восприятие смысла, рассуждение, идеологические проблемы, художественная ценность, средства иконописания.

Список использованной литературы

1. Бакунц А., Страны, Ереван, 1986.
2. Давтян В., Важно знание духа // «Литературная газета», 1985, №3, от 18 января.
3. Паносян С. О., двух моральных типах героя в современной армянской прозе, журнал «Советская литература», 1988, г. 6:
4. Современные методы обучения, приемы, упражнения, Лорийское отделение КАИ, 2008.
5. Хачатрян С., Эффективные приемы обучения, «Фонд Э. Ф. Эберт», Армения, 2020.

FEATURES OF THE APPLICATION OF THE MODERN METHOD OF APA

Arzoumanyan Armenuhi
YSU, Armenia

Summary

In the article entitled "Features of application of modern method APA - training" we tried to show a kind of layers application of the method, due to the nature of the learner material, the need for its in-depth analysis, interlinked with the interpretation of previous material and new teaching topics. The features of the application of this method became more visible and understandable based on the analysis of the story "Lar-Margar" by .Ak.Bakunts

The main objective of the study is to identify features of application of modern method of APA- - learning, the advantages of the method as an interesting learning through a deeper interpretation of the material, systematization and generalization of previous material, explanation of new material with the previous topic, thorough analysis of the subject and strengthen the acquired knowledge.

In the methodological literature, there are a number of scientific studies devoted to the above problem: "Modern methods of teaching, techniques, exercises", Lori Department of the KAI, with Vanadzor, 2008, S. Sarukhanyan, Dr. I., Modern methods, techniques, exercises, Yerevan 2009, "effective teaching techniques", S. Khachatryan, E. F. Ebert Foundation, Armenia, 2020, Valmont In "Technologies for literacy and learning". New York. Houghton Mifflin Company, 20

The above-mentioned authors tried to present the features inherent in modern teaching methods and the features of their application in their own way.

The purpose of the article is to identify the essence of the above method, the principles of teaching material by this method, indicating and justifying its advantages due to the relevant features of this method of teaching, as well as the features arising from the purpose of teaching.

The novelty of this study is the consideration of the phased application of the modern method of APA - training. The article considers the relationship between the artistic material and the historical period as a means of in-depth analysis of the learning material.

Keywords and phrases: Stimulation, perception of meaning, reasoning, ideological problems, artistic value, means of icon painting.

References:

1. Bakunts A., Countries, Yerevan, 1986.
2. Davtyan V., It is important to know the spirit, Yerevan, №3.
3. Panosyan S., On two moral types of the hero in modern Armenian prose, journal" Soviet Literature", 1988, g. 6.
4. Modern teaching methods, techniques, exercises, Lori Department of KAI, c Vanadzor, 2008.
5. Effective teaching techniques, S. Khachatryan, E. F. Ebert Foundation, Armenia, 2020.

Материал был представлен и отправлен на рецензию: 10.02.2021
Принято к публикации: 14.04.2021
Рецензент: канд пед. наук, ассистент Мери Оганнисян

The material was submitted and sent to review:10.02.2021
Was accepted for publication: 14.04.2021
Reviewer: PhD, Assistant Mary Hovhannisyan

378.147:811.19

ԿԱԽՑԱԼ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ (ՁԵՎԱԲԱՅԵՐԻ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հովհաննիսյան Մերի
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: 20-րդ դարի 30-ական թվականներից դերբայները հայոց լեզվում դիտարկվեցին որպես բայի անդեմ ձևեր: Գ. Սևակը, խոսելով բայի ըմբռնման մասին, գրում է. «Մեր դպրոցական քերականությունն այդ կնճռոտ հարցը միայն վերջին տարիներին լուծեց. բայը իբրև խոսքի մաս առանձնացնելով թե՛ ստորոգյալից, թե՛ մանավանդ նախադասություններից, բայի մեջ դիտելով երկու դրսևորում, արտահայտություն կամ ձև, այն է՝ եղանակային կամ դիմավոր բայեր և անդեմ բայեր կամ դերբայներ» [14, 179]: Ա. Աբրահամյանը, խոսելով դերբայների նշանակության և դերի մասին, գրում է. «Հայերենի բայի խոնարհման համակարգի մասին, սակայն, ամբողջական պատկերացում չի կարելի կազմել առանց դերբայների: Դրա մասին են վկայում անալիտիկ կազմություն ունեցող դիմավոր ձևերը, ուր հիմնական դերը պատկանում է դերբայներին» [2, 8]:

Խոսքի մեջ բառերի ճիշտ ընտրության և դրանք խոսքային իրադրությանը և գրվածքի բովանդակությանն ու նպատակին համապատասխան գործածելու հմտություններ ձևավորելու համար հանրակրթական դպրոցի միջին դասարանների հայոց